


Հայրենեաց



ՄԵԱՐ
ՈՒՅԵՆԱԿԻ
AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription \$1.50 a Year.

ԲԱՃՆԵՅԻՆ
Մ.ՆԱՀԱՆԳՍՑ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Վեցամսեայ 0.85

ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Յրանք
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:

ԳԻՆ 3 ՍԷՆՑ:

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ո՛վ պիտի փրկէ մեզ. — Օրուան կեանքը. — Երկու խօսք մեր հին գրականութեան մասին. — Թաւրիչ և Նիւ Ենթը (Տեղեկագիր թարգմանիչ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան). — Վարդապետական ժողով. — Բարեգործական պատասխաններ. — Բանասիրական (Շարժումը կեանք է և կեանքը շարժում):

Ո՛վ ՊԻՏԻ ՓԻՂԻՍ ԵՄԶ

Հայրենեաց ամեն կողմերէն, ամեն խաւերէն ձայն մը կը բարձրանայ, աշխարհի չորս կողմերն առաջնորդած հայր անոր արձագանք կուտան: — Ո՛վ պիտի փրկէ մեզ:

Վիթխորի յայտնու փյառակին տակ շարժանքը աստուծոյ ժողովուրդի մը կուրծքէն է որ այդ ազգայնաբար մրմունջը կ'ելլէ: Իր փրկութեանը համար թափած հերոսական ճիգերը բուսաւորին ոտքերուն տակ տրոտուած, փրկաստեղծող ուղիքէն անոր օգնութիւն սպասող ակնկալութիւններն արհամարհուած, Երկինքը նորա սրտառու ժողովանքներուն առջև խուլ, շուարած ազգի մը ազատակն է:

Հայրենեաց անկողնէն, տունները մոխրակոյտ, կործանները սրտկոտոր, ապրուստի ամեն միջոցները կազմալուծ, և այդ ահալի ամայութեան վրայ Հայաստանաբնութիւնը ցրտաշունչ փոթորիկ մը պէս կ'ոռնայ: Հոն ցաւը, սոսկումը, նախատինքը կը մարմնանան, կը ծանրանան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆ ԾԱՐԺՈՒՄ ԵՒ ԵՒ ՇԱՐժՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆ (Շարժանկութիւն նախորդ թուէն)

Շարժումը և գործելու աստիճանները մենք կը տեսնենք ոչ թէ միայն խոշոր մարմիններու մէջ, երկնագունդերու, աստղերու և երկրի շրջանին մէջ, այլ նոյն այդ շարժման իւրաքանչիւր օրէնքին հպատակ է և հիւլէն, այն մանրահատիկը, որ մեր պարզ աչքերով չենք կարող նշմարել: Հիմա տեսնենք թէ ինչ օգտակարութիւն կայ այդ շարժանքներու շարժումէն: Երբ քաղցր կանցնինք և կը կոտորենք այդ փոքրիկ մարմիններու վրայ, բնաւ ուղարկութիւն չենք դարձնիր և չենք ալ հետաքրքրուիր իրենց գոյութեան նպատակին վրայ, սակայն և այնպէս հիւլէի գոյութիւնը տեսնելու համար միակ կայման է: Ամեն հիւլէ նպատակի մը համար կ'պատկանայ և իր տեղը և անոնցմէ իւրաքանչիւրը իր մէջ երեւցած բացարձակ կայունութեան մէջ մեր ըմբռնումի շարժումէն դուրս ելող անիմանալի շարժումով մը զէպի կեդրոն մը կը ձգուի և

Լքուած ամբարիս վրայ, ու անկէ արիւնի ու արցունքի գեանք կը բամբն: Հայ չկայ, հանգերձ չկայ, պատու, ապահովութիւն չկայ, տէր չկայ: Ձեռքերն ու ոտքերը կ'ապուած զուր կը պատառուի վայրագ գազանին ճիրաններէն: Ամեն բերան նոյն միացող սրտէն նոյն ազատակը կը բարձրացունէ հայ աշխարհէն: — Ո՛վ պիտի փրկէ մեզ:

Ի՞նչ պատասխանենք: Հողին խոնաւ ու մահահոտ ծոցին մէջ ինկած սերմեր կը փոտին: Հոն ալ փրկութեան հարցը կայ շեւքան: Անոնք կը մեռնին, կը կորուսեն: ապրիլ, ծլիլ կուզեն. սակայն ո՛վ պիտի նորոգէ զանոնք, ո՛վ անոնց ծլիլ թեւեր պիտի տայ դուրս թռելու, բողբոջ, ծաղիկ, տերեւ հազնելու: Այդ բուսական գերեզմաններէն ո՛վ պիտի յարուցանէ նոսնակներ, նոսնակներ. վարդեր, մեխակներ, շուշաններ: — Գարնան արեւը, կը պատասխանուի: Որո՞ւ մտքէն կ'ընցի կեանքի այն կայծիկը որ սերմերու նիւթներէն մէջ կը շարժի աննշմարելի. այն աննկատ կենսունակութիւնը, որ կը պայծառանայ արեւին ճառագայթներովը, կը կայտարի լոյսի ջերմ գոգնանքներէն, կը մարմնանայ շողին, ցօղին, հողին միջոցաւ, և արեւին եօթներփնան գոյներով զգեստաւորեալ դուրս կ'ելլէ, նորոգի մահուան մը պէս անհուն խայտանքով թեւերը կը տարածէ և կ'աճի ու կ'ուճանայ: մինչ անդին կենսագրուի սերմեր կը փոտին, կը նիւթին և կը չքանան, որոյ համար արեւը կեանք ջուրն, լոյս ջուրն, գոյն ջուրն: կեանքի ահալ հոսանքներ կը սակն անոնց վրայէն, առանց դրսէն կեանք ներմուծելու ընդունակութեան, զի ալ ներքին կեանքի կայծիկն անոնց մէջ մարած է իսպառ:

Հիւլէներու այդ անհամար բազմութիւնը թէ փրկենք նիւթով թէ իրենց շարժումով ընդգրկուածով մը կը յօրինեն այն ահալքին գանգուածները, որ երկրագունդը և երկնագունդը կը կոչենք: Երբ յաճախ ձեռքով ակնհայտութեան վրայ կը խօսինք, կ'ըսենք, երկիրը իր մօտ երաժ կամ իր ձեռքով ակնհայտութեան շրջանին մէջ գտնուող մարմիններն իրեն կը քաշէ: Այսինքն յիմէ դուրս ուրիշ մարմիններու շարժման յատկութիւն տալու գործիքները ունի: Ահա այդ պարագային պիտի տեսնենք թէ շարժելու կամ շարժեցնելու կարողութիւնը ոչ թէ միայն ահալքին գանգուածին մէջ է, այլ այն հիւլէներուն մէջ, որոնք հաւաքաբար գանգուածը կը կազմեն:

Հիւլէներու դէպի իրար շարժելու և մօտենալու մէջ ալ մենք կը տեսնենք բարի նպատակ մը, այդ շարժման մէջ ալ ինչպէս երկնային մարմիններու շարժումին մէջ ներդրանակութիւն մը, կարգ ու կանոն կայ. բացի այդ բնութեան կարգադրած դարմանալի մէջ օրէնքով տեսնուած է, որ միևնոյն տեսակէն ելող հիւլէները աշխարհի այդ խառնակութեան մէջ կարողացած են միասին գալ, իրար ընդգրկել և կազմել այն փանկա-

Փրկութեան հրաշագործ ուժը ներքին կեանքի աննշմարելի կայծիկին մէջ է: Գ. Պ. ՉԻԹՃՅԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Հերոսը ու Ամբոսը. — Ժողովրդի Մարտը. — Կենդանի Արձան. — Նոր մշակ մը.

Հերոսն ամբոսէն կը ծնի, ամբոսի զաւակն է, բայց ամբոսէն կը պաշտուի, ամբոսի աստուածն է: Ո՛վ կը հասկնայ կեանքի գաղտնիքը: Նոյն մարտը, որ երեւի մեր մէջ էր, ու ամբոսի խաւերուն մէջ կ'ապրէր, որ մըն ալ տեսնես ան ամբոսէն վեր բարձրացած է, ալ նա երեւակայութեան մէջ կ'ապրի, տարբեր էակ մըն է, և ո՛վ կը հաւատայ թէ նա մեզ նման մարդ մըն է:

Ու Տիւրքին կը հաւատար թէ ինքը որ մը Հերոս Տիւրքի պիտի ըլլար, ու եօթնասուն հինգ միլիոն ժողովուրդ միահամուռ զինք պաշտէին, իրեն խնկարկէին: Բազըր զանի Մանիւս ձգեց, արիւթիւն ունեցաւ, յաղթեց ու Հերոս դարձաւ: Եթէ միջոց ու ասպարէզ չօգնէին իրեն ան Հերոսն էր, կամ պիտի փայլէին անոր ընդունակութիւնները, թէ ժանգոտած իր հետ գերեզման պիտի իջնէին...:

Անըզպետը գնդաձև դարձող մարմիններով լցուցն է, ու բազըրն ալ գընդաձև կը դառնայ, որ մը տակ, որ մը վրան, որ մը ստոր, որ մըն ալ բարձր: Երանի՛ անոր, որ ատ բարձրութեան մէջ կը մեռնի, որովհետև ան բարձրութեան

գին հանքերը, որոցմով մարդիկ իրենց հարստութիւնը կը կազմեն: Միտեսալ հիւլէներու այդ միացումը ինձ կը յիշեցունէ մարդկային սեւի մէջ կազմուած այլ և այլ ազգերու գոյութիւնը, որոնք միևնոյն լեզուն, կրօնքը, տիպը և կազմուածքն ունենալով իրար եկած և տարբեր տարբեր ազգութիւններ են կազմած, որոնց մասին քիչ վերջ պիտի խօսիմ:

Նիւթական աշխարհի այդ քանի մը օրինակներէն սա կ'եզրակացնենք թէ՛ շարժումը տեսնելու մէջ ընդհանուր օրէնքն է, միևնոյն ատեն կը տեսնենք թէ տեսնելու շարժումը ընդհանուր կանոնի մը հպատակ է և հպատակելով այդ կանոնին՝ նա գոյութիւնը պահպար է անյիշելի ժամանակներէ ի վեր: Հոն վերջ անհունին մէջ կարող բնաւ խանգարուած չէ և հիւլէի շարժումէն սկսեալ, որ կեանքի նախնական ձևն է միևնոյն միջոցի անկաշակի արեւները ներգազնակութիւն մը ունին, միշտ փրկենք ծիրին մէջ է որ կը շարժին և համընթացութիւն մը կայ իրենց և ուրիշ մարմիններու շարժման միջոց:

մէջ կը թաղուի...: Ու քանի՞նք ոլիմպիական բարձրութեան գլոցեր են վար, ուրիշ բարձրացած էին:

Իրականութիւնը պաշտելի է աշխարհի մէջ: Ընդունակութիւն, հանճար և ճիւղքն է որ կը բարձրանայ, բայց, թէ և երեւակայական, բազըրն ալ կայ որ ամենուն չհանգիպիր: Միթէ՞ պատմութեան մէջ՝ բազըր չի՞ եկեր ու ապիկարներուն հաներ, հաներ բարձրութեան գագաթնակէտին ու հերոսացուցեր:

Մեծ ազգերը մեծ հերոսներ կը ծնին:

Մենք ալ ազգ մըն ենք, բայց փոքր ազգ: մեծ հերոսներ չունինք անրող աշխարհին յայտնի, տիեզերքին հիացում առթող: Բայց գաղափարական տեսակետով հայ հերոսներ ալ ծնած են աւելի բարձր մտքի, սրտի, կամքի ու գաղափարի մարդիկ, որոնք սակայն Հայուն հորիզոնը միայն լուսաւորած են: Բազըր չէ՞ սակայն, կամ աւելի պարզ, ասպարէզ ու միջոց չէ՞ որ զանոնք փոքր ազգի արև ստեղծած է:

Ալեքսանդր Սրբազանը, որ երէկ ալ յաւիտենակապութեան գիրկ անցաւ, իր պարթև կազմուածքով, տոկուն կամքով, եթէ բազըր որ մը զանի Մանիւս ձգէր, ու նա Հերոս մը չէ՞ր ըլլար, միլիոնաւոր ժողովրդի մը յարգանքներուն արժանի:

Բայց յառաջացաւ նա իր առջև բացուած ճանապարհէն, գործեց, չարչարուեց, սիրուեցաւ ու մեռաւ՝ իր հետ տանելով նորէն ազգի մը սէրն ու յարգանքը: Ժողովրդի մը համար ապրող, ժողովրդի ցաւերուն նուիրուող, թէ և էն աւելի հալածուած, էն աւելի ճշդուած:

Բ.

Շարժումը Հանուր Մարդկութեան մէջ

Հաւաքաբար և Ազգերու մէջ

Անհատաբար:

Նիւթական աշխարհէն հիմա կ'անցնինք իմացական աշխարհը, մարդկային շրջանին մէջ: Նիւթականին մէջ մենք տեսանք թէ շարժումը կը կատարուէր միօրինակ և մեքենական յառաջացուած թեմամբ մը: Հոն ի յաւիտենից գերեւնական ձեռք մը ամենը կարգի գրեց, դասաւորեց և յետոյ նախնական շարժումը միանգամայն տալով թողած է. և և նիւթը հաւատարիմ իրեն համար հաստատուած օրէնքներուն՝ իր միօրինակ ընթացքը կը կատարէ դիմելով գէպի այն յաւիտենական նպատակը, ուր հասնելու ուղիներու մէջ նորէն միևնոյն ձեռքէն:

Սակայն երբ իմացական աշխարհը կը մտնենք, ամեն ինչ տարբեր կը գտնենք. հոն կամք, խորհուրդ, հոգի, անհատականութիւն և ինքնուրոյնութիւն կը պակասին, հոս սակայն մարդկութեան մտնած մէջ շարժումը մէջ այդ զլխաւոր իմացական յատկութիւններու երեւումը կը տեսնենք, որոնք շարժումը կ'իզականաւորեն, հոն, նիւթական աշխարհը բնութեան անյիշելի օրէնքներ հպատակ է, հոս

մեծնի, բայց անոր վարձքը ժողովրդի սրտին մէջն է: Ու ասկէ աւելի ի՞նչ մեծ վարձատրութիւն կայ:

Այսօր իսկիւստարի բարձունքին վրայ ննջողը, բարձրութեան մէջ մեռաւ, զի ան արժանացաւ «Ժողովրդի Մարտ» կոչուելու:

* * *

Բայց սրտին սէրն ու յարգանքը պէտք է արտայայտուի արտաքին կերպով, եթէ ոչ սրտին մէջ կը մնայ ու սրտին մէջ կը մեռնի: Կենդանի Հերոսին յաղթական կամար կը կանգնեցնեն, ինչպէս տեսանք մեր աչքով: Իսկ մեռածի շիրմին վրայ մահարձան կը շինեն: Ու Պոլսեցիներն արդէն ձեռնարկած են մահարձան մը յօրինելու Ալեքսանդր Սրբազանի շիրմին վրայ: Իրենց պարտքը կը կատարեն: Մենք, Ամերիկայի Հայերս ալ պարտք չունինք Հանգուցեալ Սրբազանի յիշատակին: Չը կանգնեցնենք երկու կենդանի արձաններ, անոր յիշատակով վառ, երկու անտէր անտիրական Որճիկ կ'ըսեմ, պահելով զանոնք երկու որբանոցներու մէջ, փրկելով զանոնք թշուառութեան ճանկերէն: Մինչ վարագի Որբանոցին մէջ՝ ի յիշատակ վարագի վանահայր Թադևոսի, միւսն՝ Կիլիկիայի արհաւիրած Կիլիկիոյ ընտրեալ կաթողիկոսին:

Շատ ծանր չէ՞ աս, մէկ որբ անորով տարի մը 25 տարւով կը փրկուի: Թեմիս Սրբազան Առաջնորդը վանի սովկոց Հաշիւը փակելէն յետոյ, Խմբագրութիւնս յանուն սովկոց նուէրներէն ու «Տիգրիս»-ի վաճառումներէն ստացած այժմ պատրաստ ունի 14 տարի շափ դումար մը: Վանցի որբ մը, վանցի սովկա մըն է. եթէ նուիրատուներու կողմէ անյարգաբարութիւն չի համարուի, կրնանք այդ գումարը առաջարկուած նպատակին յատկացնել, մնացորդը սպասելով որ Ալեքսանդր Սրբազանի յիշատակ յարգող բարեխնայ ազգայինները լրացնեն, իրենց նուէրները Սրբազան Առաջնորդին կամ Խմբագրութեանս խրկելով: Կը հաւատամ թէ պիտի գտնուին աշխիւ զգացմանցութիւն իւր մը, կամ Որբանոցի ընկերութիւն մը, որ յանձն առնէ որբ մը պահել Կիլիկիոյ որբանոցին մէջ այդ նպատակով:

* * *

Երբ Պոլիս կեղեցւոյ արժանաւոր մշակ մը կը հանգչի, Հոս, աս օտար ու

այդ օրէնքը մարդոցմէ կախուած է: Մէկդէ թողլով մարմինը, որ իր յիւթը բնութեան ամեն կարգի օրէնքներուն ենթակայ է, բնականաբար մեր նիւթը պիտի ըլլայ անոր իմացականութեան Հետ գործ ունենալ:

Երբ տակաւին երկրորդունը մարդկային ցեղի ցանցակերպ ընտրութիւններով շէր գրաւուած, այլ նախնական մարդիկ ցանցաւոր թուով այս ու այն կողմ կը դիմէին իրենց նահապետական փոքրիկ ընտանիքներով և կենցեղի զօրուարութիւնը մարդոց Հետ ըլլալէ աւելի՝ բնութեան Հետ էր, անասնական աշխարհի Հետ էր մրցումին, այնքան ալ պէտք չունէին իրենց իմացականութիւնը գործածելու: միտքը իրեն գէ՞մ չտեսնելով իրեն հակադիր ուժ մը, լարուած շարժումի ստիպումը շէր զգար. ահա ատոր համար է որ այդ դարերուն մէջ սուր բնազդի նշաններ միայն կը տեսնենք, այսինքն իմացականութեան ամենաստոր ստիպումը, որ անասնական աշխարհի մէջ աւելի զարգացած է: Սակայն երբ մարդը սկսաւ բազմանալ թուով և միեւնոյն ընտանիքի վերաբերող անհատներ միասին գալով թէ՛ նախնի և թէ՛ արդի ազգերու Հիմը կը դնէին, այն ատեն բոլորովին տարբեր պայման յառաջ եկաւ: մարդը ստիպուած էր իր կեանքը աւելի գերակեցելի ընելու և իր թէ սերունդի

պանդուխտ երկրին մէջ կեղեցիկ իր ծոցին մէջ նոր Մշակ մը կ'ընդունի:

Մի քանի ամիսներ առաջ երբ նոր Ամերիկա կը հասնէի, բարեկամ մը ինձ կ'ըսէր:

— Բրովիտէնսի մէջ շատ ազդու ատենախոս մը պիտի տեսնաս, Պատ. Մարտուկէսեանը, միեւնոյն ժամանակ չափազանց ազնիւ մարդ է:

Բարեկամիս կ'սրծիքն էր աս անոր մասին, բայց ես զինքը բնաւ չէի ճանչնար: Օր մըն ալ բազմ ունեցայ զինքը սենեակս Հիւր ընդունելու: Գործի մը համար եկած էր: Բանի խօսակցութեան մէջ կը յառաջանայինք, աւելի ու աւելի համարումս կ'աւելանար անոր վրայ և և նոր համոզումներ կուենային: Պարզ ու անկեղծ գտայ զինք, միեւնոյն ատեն ինքն ալ չկրցի իրենս հաշիւ տալ թէ ինչու առաջին հանգիպումին այնքան անկեղծ համակրութիւն ունեցայ դէպի նա: Բայց ճշմարտանքը, իր խօսակցութեան մէջ պերճախօսի մը տպաւորութիւն չի ուզուց վրաս:

Օր մըն ալ Բրովիտէնսի բեմին վրայ տեսայ զինք, վարդապետին կողքին նստած:

Վարդապետը իր խօսքերը կը ծամծամէր, կը թափփէր, Բրովիտէնսի Հեռուոր տեղէ գալով բացատրելու համար Շիքաի կը տանէր, Նիւ Եորք կը բերէր, ճափոն կը հասցնէր ու բարձր երկնքէն վար կ'իջեցնէր: Պրն. Մարդուկէսեանը խօսեցաւ, ազդու էր, գրգռելի ու զգայնիկ: Ակամայ նախանձ մը զգացի. ինչու վարդապետը աւելի լաւ շիքաի քան Հայ պատուելին: Ինձ համար խորութիւն չկայ, Հայը Հայ է, ինչ ուսանողութեան ալ կուզէ թող պատկանի: Բայց կարծես բոլորիս ալ մօր կաթիլն մնացած է, աս իլի նախանձախնդիր ենք մայրենի կեղեցւոյ շահին ու պատուին: Եւ դա գովելի է:

Այսօր կամայ անկամայ նախանձ ու լարուածութեան փոխակերպ, զի ան ալ, Պր. Մարդուկէսեան, կը թողու Բողոքական երէցի պաշտօնը ու Հայ Վարդապետ կը ձեռնադրուի: Ամիսներու ծանօթութիւնս ինքզինքս աւելի մօտեցուցին անոր: Հնազանդութեան համար չափը աւելցաւ՝ երբ աւելի ծանօթացայ անոր ազնիւ ձգտումներուն: Գրասնափոխ կը լայն ա, կ'ըսեն, ես ալ կ'ըսեմ Մայրենի կեղեցւոյ գերի կը դառնայ: Ինչ որ կուզէք ըսէք. ո՛չ ոք իրաւունք ունի այդ

և թէ համազգիներու գոյութեան պահպանումը մտաւորութեան համար նոյն ինքն իրեն համահեռ մարդոց Հետ մրցել: Նահապետական դրութիւնը փոխակերպ աւանդական տիրակալութեան, այդ ալ իշխանութեան թեման, իսկ այս վերջինս միակեցութեան և կառավարական այլ և այլ ձեւերու, որոնք այսօր գոյութիւն ունին աշխարհի վրայ:

Մարդը գոյութեան կուռի շրջանին մէջ բնազդէն գաւաճող իր մէջ ունենալով բազմապատկար աւելի բարձր ձգտում ու յատկութիւններ, կամքի ինքնուրոյն ոյժը, Հոգեւոյն գերմարդկային ձգտումները, սրտի և զգացման ազնուութիւնները և բարոյական բարձր առաքելութիւններու նախնի յարածի սերմերը, բնական է որ այդ սերմերը դարձնու ընթացքին մէջ իր Հետ պիտի ունենային եւ պիտի պայտարբէրէին: Թե ահա գոյութեան կուռի Հետ երեւան կեղծ կը տեսնենք ուրիշ աւելի ազնիւ կուռ մը. գեղեցիկ ճաշակը եւ մտքի սուսուռման Հետ երեւակութեան վառ ու ստեղծիչ յատկութիւնները սկսած էին Հրաշակերտներ արտաբերել: Գեղարուեստը ընտելուած էր եւ ազգերու մէջ առաջացուցած էր աւելի վեհ շարժում մը, մրցում մը, մէկը միւսը գերազանցելու խլրտումներ: Ատորական ցլամարդը, երկարակամ սփիւնքը առիթ առած էին

առթիւ մէկը մեղադրուել, զի կրօնքը խղճի օրէնքն է, իսկ խիղճը ազատ է. բռնաւորները միայն կը բռնաբարեն խղճի ազատութիւնը:

Շահ չէ, որ Պրն. Մարդուկէսեանին կը թելադրէ վարդապետ ըլլալ, զի Բողոքական պատուելին Պօրտ ընկերութեան արդէն ապահոված է իր ոտճիկը, մինչ Հայ վարդապետները, Հոս, Ամերիկայի մէջ շահու ոչ մի դուռ ունին: Անցեալներ բարեկամ երկրասարգ վարդապետ մը մտերմօրէն խոստովանեցաւ, որ մի քանի Հարիւր տողարներ պարտք ունի, կը հաւատամ զի շատ Հնէն ու մօտէն կը ճանչնամ զինքը, և իր բարի տրամադրութիւնները գրեմ, ու Հիմ կրնար բազմաթիւ այն վարդապետներ վարդապետին Հետ, որ շարունակ կը գանգատէր թէ գրամ չունի, մինչ մահուանէն յետոյ 600 տողարներ երեւան եյան: Ինչու ուրեմն Պրն. Մարդուկէսեան վարդապետ կը ըլլայ:

Հայ վարդապետը իր առաջ ազգային գործունէութեան ապարկէ մ'ունիլաւ, ազնիւ ձգտումներու տէր կեղեցականներ, որոնք թիւը դժբաղդաբար շատ քիչ է, մեր ազգային կեանքին մէջ մեծ դեր խաղացած են, թէ և փարաջանները միշտ ալ պակաս չեն գտնուած: Բացէ՛ք Ղազար Փարիսեցի, և տեսէ՛ք թէ այդ փարաջանները ի՞նչ Հաւածանք Հարուցած են ազնիւ կեղեցական գասին դէմ, և վերջն ալ երանելի Մուշէի սոկերոսի գերեզմանէն Հանելով գետի ալիքներուն յանձնած: Կղեր փարաջաններու վճճմակ մ'ունինք այսօր, որոնք բեռ են ազգին: Բայց ո՞վ շիքացեր Հայրիկի ներսէսի, Իզմիրլեանի, Նարպէյի, Ալեքսանդրի ու անոնց նման կեղեցականներու ետեւէն: Բաղաբախտ ազգ մը չըլլալու համար, մեր կեղեցականութիւնը մեզ առաջնորդ է ամեն գործի մէջ, կեղեցիկէն գուրս ալ ազգային ու քաղաքական խնդիրներու մէջ: Եւ դեռ երէկ Լա-Հէյի վեհաժողովին Հայկական խնդիրը ներկայացնելու համար կղերին էն ծայրայեղ Հակաազգային անգամ կղերին սպասեցին առաջնորդութիւնը: Ուրեմն նախանձախնդիր պիտի ըլլանք ազնիւ ու գործունէ կրթականութիւն մը ունենալու, մեր պահանջը այլ է, մենք չենք կրնար մեր կղերականութիւնը բազմաթիւ օտարազգի կղերականութեան Հետ: Պրն. Մարդուկէսեան, այժմ շնորհու-

որ Յոյն Հանձարը իր փի մը Հողին վրայ ծնունդ տար Աթենասի, Ապոլոնի և այլ շատաւաններու հիանալի անդրիներուն, որ Հողմի իր շքեալ Տիանան արտաբերէր: Նիսուէի կախ պարտէզները, Եգիպտոսի բուրբերը աւելի կրկուցելով ու ազնուանալով՝ Յունաստանի մէջ եղած էին Ակրոպոլիս, Գիտի ստանդը ևն, իսկ Հողմի մէջ կողտնեն և կապիտոլ, որոնց աւերակներու առջև իսկ այսօր տեսակ մը պատկառանքով կը մօտենանք:

Աւելի բարձր, աւելի ազնիւ ու գեղեցիկ շարժում մը, քայլ մը, յառաջխաղացութիւն մը միշտ իրեն օժանդակ ունեցեր է միջովայրը: Եթէ Յունական թերակղզին չըլլար՝ Յոյն ժողովուրդի Հնութեանց Հրաշակերտները չեմ կարծեր թէ պիտի ունենայինք մեր թանգարաններու մէջ: Բնութիւնը, երկրի Հարստութիւնը, ծովային կամ ցամաքային գիւրքը, այնեալ ազգերու Հետ առընչութիւններ, խաղաղ ապրելու միջոցներ եւ մինչև իսկ եթերի պայծառութիւնը ամենը միասին առնելով ազգերու ամեն կարգի շարժումները կը ձեւակերպեն: Բացի այդ՝ ընկերական կեանքի մէջ մարդոց տարբեր տարբեր գաղափարներ, տեսութիւններ, Հայեացքներն ու կարծիքները աւելի նշանակելի ազգեցութիւն ունին իրար վրայ, մէջէ մէջ շարժում մը, Հաղորդակցութիւն մը կայ,

նակ կարապետ Սարկաւազը նուիրուած է ազգին շահերուն ու կ'ուզէ օգտակար ըլլալ, ու յայն ասպարէզի մը մէջ կը մտնէ և ծանր պատասխանատուութիւն մը կաննէ իր վրայ: Ընէ՛ք խնդրեմ, ուրիշ ի՞նչ գրաւիչ բան կայ երկրասարգի մը համար կեղեցականութեան մէջ նեւուելուն:

Ուստի Երեսփոխանական Ժողովը, էն յաջող ու արժանաւոր ընտրութիւն ըրած է, Պր. Մարդուկէսեան, իր կանոնաւոր ժողովով Ուստի վիճակին Հովիւ ընտրելով: Երկրասարգ, պերճախօս ու Հայրենասէր նորընծայ վարդապետին կըստանալ արդարացնէ իր վրայ գրուած յոյսերը, արժարժէ ազգային կեանքն ու սէր Ուստի թմրած գաղութին մէջ, եւ նոր ու առկա խնդիրներու լուծումայն ու ստով միայն պիտի կրնայ ամչնել իր յոռետես ու նեղ կրքերի տէր Հակաազգայի Հայհոյները:

Չը մեղադրենք զանոնք, ամբողջ իր խաւերն ունի, որոնք աստիճաններով ըկ զանազակ ունին:

Վ. ՇԱՀԷՆԻ

ԵՐԿՈՒ ԽՕՄԲ ՄԵՐ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԱՆ ՄԱՍԻՆ

(Պատասխան Հարցման Մը)

Պատուէն բարեկամ մը ուշադրութեանս յանձնած է ու ինձմէ պատասխան խնդրած է Հետեւեալ տողերու մասին, զոր Նիւ Եորքի մէջ Հայերէն տառերով Հրատարակուող «Շտեմարան Անպիտան Գիտելաց» էն առած է:

Ահա՛, ատ տողեր «Մեր գրականութիւնը Յունարէնէ, Լատիներէն և Պարսկերէնէ գոյցուած է»:

Որչափ կը ցաւիմ որ ինքս չէի կարողացեր ատ տողերը, զի երկար ատեն է որ տխրութիւնս փարատող ծիծաղաշարժ նիւթեր կը փնտռէի. որքան՝ սխալած եմ եղեր. ատոր վեցում վար ծիծաղի ի՞նչքան նիւթեր կան:

Բայց այս նշանաւոր նոր գիւտին առաջ՝ ալ պէտք է խոնարհիկ կուտմիտ, Հիւազման, Կարիէրն ու Մազը: Այսպէս ալ ծայրայեղ ազգայնութիւն կը լայն. ի՞նչ յանդուրժութիւն թէ գրողի և թէ լրմբաբարի կողմէն: Թերթ Հրատարակել, գրական ապարկէզ նետուել և այդ գրականութեան անցելոյ վրայ գէթ տարական ծանօթութիւններ չունենալ: Ատ իմաստակներուն ըսելու է, որ դուք այս ատ այն ազգէտ շրջանի մէջ կրնաք ամեն սփիւտութիւններ ընել ու փրկստիպաներ ներկայանալ, բայց գէթ Հրատարակ մի՛ իջնէք ձեր ազգայնութիւնը մերկացնելու: Եթէ բոլորը չհասկնան, գէթ դասակարգ

որ կրնանք Հոգւոյն ու մտքի մազնիստցումը անուանել: Եւ այս ամենէն մենք կ'ըզտակցենք. — Մարդը թէ՛ անհատաբար եւ թէ՛ հաւաքաբար շարժումներու հաւաքածոյ մըն է, միեւնոյն ատեն կրնանք ըսել թէ բարոյական եւ իմացական ամեն յատկութիւններ կամք, ձրք, ստուգ, փափաք, միտում, զարգացում և մտքի յափշտակութիւններ շարժումներու աւելի բարձր, աւելի գերազանց ստիճաններն են, որոնցով միտքն ու Հոգին օժտուած են:

Երբ ազգերու շրջանին մէջ կը մըտնենք, կը տեսնենք թէ այդ միտումներու ու ձգտումներու ազնուութեան կախումն ունի իրենց քաղաքակրթութիւնը կամ վարկերութիւնը, իրենց զարգացումն կամ ազգայնութիւնը: Յաճախ կ'ըսենք՝ Անգլիական ազգը կամ Գերմանացիին կը թեւաւ են, քաղաքականացեալ են, այդ ցոյց կուտայ թէ այդ ազգի մասնիկները կամ մող իւրաքանչիւր անհատ գէպի լաւը, գէպի օգտակարը, գէպի ազնիւ ձգտելու յատկութիւններն ունի և անհատական շարժումով իրենցով խառնալով իր ժողովրդի մը միահամուռ կամքը կ'արտայայտուի և իր ազգին համար կը պատրաստէ այն բարձր պատուանդանը, որուն վրայ կը կանգնի այսօր:

Ս. ՍՈՒՐԻՆ

(Շարունակելի)

մը կայ որ իր մայրենի գրականութեան պատմութիւնը գիտէ:

Ինչպէ՞ս կրնայ մեր գրականութիւնը Պարսկերէնէ գողցուած ըլլալ, երբ Պարսիկները միայն մի հին գրական գարդունին Յրատուի Շահ Նամէն, որ մեր մատենագրութեան Ոսկեղէնի գարէն քարեր յետոյ գրուած է:

Մովսէս Խորենացին իր Հայոց Պատմութեան Ա. Գրքի վերջը փոքրիկ յաւելումով մը միայն ըրած է՝ Պարսից առասպելներէն կտոր մը, որ Սահակ Բագրատունին թախանախ զարած է, միևնոյն ժամանակ յայտնելով իր արհամարհանքը:

Ուրիշ կրնայ մեր հին գրականութիւնը լատիներէնէ գողցուած ըլլալ, երբ Հայոց յարաբերութիւնները լատինաց հետ սկսեցին Ռուբինեանց ժամանակ, թէև այդ դարերու գրականութեան վրայ ազդած է Լատին լեզուի ու մասամբ միայն գրականութիւնը, բայց ընտելացուած: Մեր ձեռքը կտած է միայն Գրիստոսէական շրջանի մատենագրութիւնը: Իսկ Հեթանոսական շրջանի բանաւոր գրականութիւնէն մեզ կտած է կտոր միայն Ռուբինեանցի գրականութիւնը: Բայց Ռուբինեանցի գրականութիւնը ու որբերգութիւնները, որոնք այսօր մեզ կտած են, և չունեցածի վրայ ո՞վ կըրնայ դատաստան ընել:

Գալով Յունարէնի: Չերկարելու համար կարճ կընենք մանրամասնութեանց մտնել հարկ չենք սեպեր: Գողցուած ոչինչ կայ, զի առհասարակ մեր նախնի Մատենագրութիւնը դուրս ազգային է. Ազգայնագիտութիւնը ու Փաստաբանութիւնը գրուած են երբեք Յունարէն լեզուով: Հայոց ստանդարտ գրականութիւնը մէջը գրեթէ ոչինչ Յուն մատենագրէ մը վերցուած է: Լատինացի բնագիրը ասորիէն է:

Երբ որ գրական կոթողները իրենց կրթութիւնը ստացած են Յունաստան. բայց այդ չինչանակելով մեր գրականութիւնը Յունարէնէ գողցուած է:

Պարսկերէնի «Փիրք Պիտոյից» և «Ալիսարհաբութիւնը» ընդհանրապէս թարգմանութիւններ են (թարգմանութիւնը գողցուած չէ) այն ալ ընդհանուր կարծիքով Պարսկերէնի շին վերագրեր, այլ Անանիայ Երևակացիին:

Երբ որ գրական կոթողները իրենց կրթութիւնը ստացած են Յունաստան. բայց այդ չինչանակելով մեր գրականութիւնը Յունարէնէ գողցուած է:

Ինչպէ՞ս կրնայ մեր հին գրականութիւնը լատիներէնէ գողցուած ըլլալ, երբ Հայոց յարաբերութիւնները լատինաց հետ սկսեցին Ռուբինեանց ժամանակ, թէև այդ դարերու գրականութեան վրայ ազդած է Լատին լեզուի ու մասամբ միայն գրականութիւնը, բայց ընտելացուած:

Մեր ձեռքը կտած է միայն Գրիստոսէական շրջանի մատենագրութիւնը: Իսկ Հեթանոսական շրջանի բանաւոր գրականութիւնէն մեզ կտած է կտոր միայն Ռուբինեանցի գրականութիւնը: Բայց Ռուբինեանցի գրականութիւնը ու որբերգութիւնները, որոնք այսօր մեզ կտած են, և չունեցածի վրայ ո՞վ կըրնայ դատաստան ընել:

Գալով Յունարէնի: Չերկարելու համար կարճ կընենք մանրամասնութեանց մտնել հարկ չենք սեպեր: Գողցուած ոչինչ կայ, զի առհասարակ մեր նախնի Մատենագրութիւնը դուրս ազգային է. Ազգայնագիտութիւնը ու Փաստաբանութիւնը գրուած են երբեք Յունարէն լեզուով: Հայոց ստանդարտ գրականութիւնը մէջը գրեթէ ոչինչ Յուն մատենագրէ մը վերցուած է: Լատինացի բնագիրը ասորիէն է:

Երբ որ գրական կոթողները իրենց կրթութիւնը ստացած են Յունաստան. բայց այդ չինչանակելով մեր գրականութիւնը Յունարէնէ գողցուած է:

Իր ստորագրութիւնը տակը կը դնէ. դեռ քո երախայ խեղճէն շատ հեռու է ամբողջ ազգի մը գրականութեան մասին վճիռ արձակել: Սովորեր նախ բառերու իմաստը, նորէն զանոնք գործածելը. գրել սովորը, նորէն գրելու և գրելու այն ինչ որ գիտես Հայ մատենագրութիւնը առանձին գիտութիւն է, հեռու կայ, հոն զբարարեւ ու հայհոյել չկայ:

ԴԻՏՈՂ

ԹԱԽԻՐԶ ԵՒ ՆԻՒ ԵՈՐԲ

(Տեղեկագիր Թախիրզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան)

Յանձնարարեալ ծրարով մեր հասցէին ուղղուած երեք տեղեկագիր ստացանք Թախիրզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան կողմէն: Շնորհակալութիւն:

Սոյն տեղեկագիրը վերոյիշեալ ընկերութեան 1191—97 և 98—99 տարիներու գործառնութեանց ամփոփումն կը ներկայացնեն:

Ուշի ուշով ընթացանք զինքի, նկատելով որ՝ արդիւնքը խիստ գոհացողիչ է, նկատելով մանաւանդ որ գործը Հայուհեաց Բարեգործական և վաստակաց շնորհիւ է ձեռք բերուած և այդ ալ Պարսկաստանի Հայուհեաց Բարեգործական և վաստակաց շնորհիւ է ձեռք բերուած: Ի վերջոյ, պիտի ջանամ ստորև հակիրճ մի համառոտագրութիւն ընել յիշեալ տեղեկագրաց, ի գիտութիւն ազգայինց, ի քաղաքացիութիւն նուիրատուաց և ի խորհուրդայինց:

Թախիրզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը մի քանի տիկնանց նախաձեռնութեամբ և մասնակցութեամբ արհեստանօրով 1890ին հիմնուած և 91ին կազմակերպուած է:

Առաջին ծրարը հանգուցեալ Ստեփանոս Արքեպիսկոպոս Միտիթարեան 1891 Օգոստ. 1ին սկսեց գործածել: Ընկերութիւնը՝ 91—92ին ունէր Լիւբաւայի Օրիորդաց Ուսումնարանի մէջ 12 ձրիավարժ աշակերտուհիք և այս գործը կատարեց 30 անգամ հիւրերով միայն:

1892ին ունէր 30 ձրիավարժ աշակերտուհիք, եւ 93—94ին երեսուն երկու և վեց ձրիավարժներ ալ կարուսէի արհեստանոցի մէջ:

Տաճկաստանի արդատի կոտորածներէ յետոյ Ընկերութիւնը իր ծրարի շրջանին զուրկ գործելու բարի տրամադրութեամբ, վարչութեան անդամուհիք տնէ տուն պտտելով՝ յօգուտ սովեցող հանգանակեցին 376 թուման (թումանը մի տուրք է), ընկերութեան ալ 647 դուան աւելցնելով 770 դուրիքի գումար մը վեհ. Հայրիկին ուղարկեցին ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն:

1895ին ծրարը ընդլայնուով, արհեստանոցին մէջ Գործադորութեան ճիւղ մ'ալ աւելցուցանք. եւ 95—96 տարեշրջանի մէջ Ընկերութիւնը ունէր 33 ձրիավարժ աշակերտուհիք, 8 մշտնջենաւոր անդամուհիք, և 46 տարեկան անդամուհիներ: Միևնոյն տարւոյ շրջանի մէջ Տաճկահայ եղբայր կարօտ վիճակը վերստին նկատի առնելով 105 օսմ. ոսկի ուղարկեց Ընկերութիւնը Ամեն. Իլմիթիկին պատրաստելով 1896ին «Մանկավարժութիւն» հաստատեց ի Լիւբաւայ, ուր 12 ձրիավարժ մանուկներ ալ ընդունին թոշակաւորներէ զատ, հոգալով նաև նոցա զգեստներն և ուտեստը: Լիւբաւայի ուսումնարանի մէջ 96 տարեշրջանին կը պահէ 33 ձրիավարժներ, արհեստանոցի մէջ 10 ձրիավարժներ. տարեկան անդամուհիք թիւը 34:

Ընկերութիւնը 97 յունվարին Վասպուրականի կոտորածներէն փախած գաղթականներուն օժանդակելու համար մօտ 110 ոսկի հանգանակած լինելով, վարչութեան անդամուհիներէն երկուսը իրենց սեպակաւ ծախսելով և ձեռնուան խնամքով անձամբ Սալմաստ գացին և նպաստներ բաժնեցին կարօտելոց: (Մերիներն ալ Պարսկէն կը լսէին), 1897—98 թուականին Մուսթաֆայի, Ղօթուր և Վառ գիւղերէ եկող գաղթականներու համար Ընկերութիւնը առաջնորդական փոխանորդ Մարաճեան Յովսէփ վարդապետին 145 թուման յանձնեց, ցորեան, ալիւր և այլ պիտոյք առնելու

համար. և բաց աստի զգեստներ ալ ուղարկեց:

Դարձեալ Մուսթաֆայի, Ալիսարհաբ և Սէօհրուլ գիւղերու մէջ ապաստանած Ընկերութեան գաղթականներու օժանդակելու համար 250 թումանի մի գումար յատկացուց՝ գնելով ամենահարմար պիտոյք:

Գաղթականաց մի մասը Սալմաստ տեղափոխուիլ յարմար գատուելով՝ Ընկերութեան վարչութիւնը փոխադրութեան բոլոր ծախսերը հոգաց. Թախիրզի մնացող հիւանդ ու անկարները մինչև հիմա ձրի կ'ընդունին բժշկական դարման և այլն: Խոյ, Ղօթուր և Վառ գիւղացիներուն աղքատութեան չափը այն աստիճան հասած էր, որ մահացողականութեան սկսած էին դիմել խեղճերը: Ընկերութիւնը եղ, ցորեն ու դրամ բաշխեց և վեհ. Հայրիկին 400 դուրիք նպաստ տուաւ այս մասին Ընկերութեան:

Վարչութիւնը՝ հիւանդ եւ անկար գաղթականները խնամելէ զատ, աշխատանքի ընդունակ եղողներու, այր կամ կին, գործ է հայթայթած և չունենոր հոգաբարձին թեթև գործիքներ, որպէս խոփ, լուծ ևն. դնած:

Դեռահաս գաղթական աղջկանց ապաքան նկատի ունենալով՝ Ընկերութիւնը իր պաշտպանութեան տակ մի տուն վարձած է և հոն սոցա գործադորութիւն սովորեցնել կուսայ:

Ընկերութիւնը Ուրմիոյ եւ Բարանգուր գաւառացի 39 գիւղերու մէջ հաստատուած 1200 տուն հայ ընտանեաց մը տուարական գործին համար Բարանգուրի մէջ 2 ուսումնարան բացաւ: Նոյնպէս Լիւբաւայի ուսումնարանին 400 թուման նպաստ տուաւ, Գ. Հիմնական դասարան մ'ալ բանալու համար:

98—99 տարեշրջանի մէջ Ընկերութիւնը Վասպուրականի գաղթականաց Թախիրզի բնակարանի մասին հարկը քսան սովաններու մէծ օգնութիւն է ըրած: Վարչութեան նախագահը Տիկին Ամատունի իր քսակէն 3 օր կերակուր եւ թէյ տուել է սոցա, մինչև որ յարմար տուն մը վարձուեր և այս խեղճերը տեղափոխուեր են ու խնամուեր. երեք ամիս այսպէս խնամուելէ յետոյ հաղուստ, կօշիկ, դուրպայ, անցաբլիք եւ ճանապարհածախ ալ տալով ուղեւորներն են կովկաս, թողնով ի Թախիրզի իրենց մէջէն 50ի մօտ անկար հիւանդներ, որոց աւելցան Աղբաղի գաղթականներ թիւով 100. սոցա եւս Ընկերութեան ծախիւք զրկուեցան Սալմաստ:

Չանց առնելով 98—99 տարեշրջանի գործունէութեանց մանրամասնութիւնը, Ընկերութեան ծախուց գումարներն խօսակ տալով կը բաւականանամ: Արհեստանոցին 6957 Ղրան(1) Մանկավարժութիւն 3873 Պարսկերէնի 6074 Ուրմիոյ—Բարանգուրի, Բարանգուր և Դիւզաթաքէ 4500 Ուսումնարանների Գաղթականաց և Թախիրզի 40880 շքաւորացի 2564 Գործադորութեան

Այժմ՝ այս ամենը ի մէջ ածելէ յետոյ, չը հարցնենք թէ՞ ո՞ր են մեր Որբերգութեան Տիկիներն և իրենց Ընկերութիւնը, ո՞ր են Հայկական Միութիւնը կործանող պարոնները. այս պիտոյց ենթակայ չէ՞ Ամերիկայի գաղութն ալ, և Ամերիկայի հուր պարտական չէ՞ ընել միևնոյն և աւելին թէ՞ հոս՝ և թէ մեր ազգակիցներու հանդէպ ի Հայաստան: Հայկական Միութիւնը պահպանողական էր, չը հաւանեցան ոմանք, բայց իրենք ի՞նչ ըրին. փառք Սասունէոյ հաշիւներն մէջ տեղն է, ամբողջ Հայաստան կրնայ վկայել, և 1895 հոկտեմբերէ ի վեր՝ աֆիօն կլորտներու պէս խոր քնոյ մէջ կը քնանան: Արեւը թիւրիւն, բայց շինելը դժուար է:

Ականջը խօսի Սիրիան և Հայրիկին. «Ժամանակ և խորհուրդ իւր կ'ըսէր» — Ահա՛ կը տեսնենք:

Տեղ. Յ. ԱՐՇԱԿՈՒՆԻ 4 Հոկտեմբեր, Նիւ Եորք:

(1) Ղրան հաւասար է 10 սէնթի:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՕՍՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ուստըրի Հովուական Թեմին Երեսփոխանական Ժողովը ներկայ սամոյ 1ին դումարուելով՝ միաձայնութեամբ որոշեց ընդունիլ թեմական Հովիւ Ուստըրի Պր. Կարապետ Մարգուկէսեանը: Ուստըրի ըստ այս որոշման՝ անցեալ կիրակէ ձեռնադրեցաւ Աւագ Մարկաւազ ըստ ծիսի Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ. և յառաջիկայ կիրակէ Հոկ. 15ին պիտի ստանայ քահանայական Ս. Օթումը և կիրակէ երեկոյն վեղարի օրհնութիւնը:

Կոչման արարողութիւնը պիտի կատարուի Ծարաթ երեկոյն և օծումը կիրակի առաւօտ:

Ծարաթ երեկոյն ժամերգութիւնը պիտի սկսի ժամը 7 1/2ին, կիրակի առաւօտեան 9ին, վեղարի օրհնութիւնն ալ կիրակէ երեկոյն ժամը 6ին:

Չայս ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան ծանուցանելով.

Մնամ Աղօթարար ԵՈՒՎՍԵՒ ԵՊԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ըրող 99.

ՈՒՍՏՐԵՆ մեր թղթակիցներն ու տեղական լրագրիչները մանրամասն կերպով կը նկարագրեն Պր. Մարգուկէսեանի արարողութեան ձեռնարկութիւնը, որոցմէ կը քաղենք:

Անցեալ կիրակի օր Ուստըրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ Մարաճեան Սրբազան Աւագ Մարկաւազ ձեռնադրեց Պր. Կ. Մարգուկէսեան և եկղ. Ե. աստիճան տուաւ Պ. Փ. Աղամեանի, որն այժմ կուսանի ԵՂՀամարանի մէջ աստուածաբանական ու փիլիսոփայական ճիւղերը, քահանայութեան պատրաստուելու համար:

Մարաճեան Սրբազանի խօսած զարուզ շարժանքանց սպաւորչէ զ ու միևնոյն ժամանակ լուսամիտ: Բարազին բնութան առած է Յովսէփ. Գ. Էլ. 23րդ համար «Ժամանակ կուզայ, և հիմա ալ է, որ Աստուծոյ պիտի երկրպագեն հոգով ու ճշմարտութիւնով»: Հայաստանեայց եկեղեցին, ըսած է, այնքան լայն ու ներողամիտ է որ կը հաւատայ թէ ամեն ուրիշ եկեղեցւոյ և ամեն յարանուստութեան մէջ փրկութիւն կայ, որոնք անկեղծութեամբ կը հաւատան և կ'աղօթեն մեր Տէր Երեսօս Գրիստոսին: Իսկ Հայաստանեայց եկեղեցին ոչ միայն հնագույն է աշխարհի բոլոր եկեղեցիներէն, այլ պատուականագոյն է Հայերու համար, զի նա մեր մայրն եղած է, մեր ինքուն ու ազգութիւն պահած է և քաղաքակիրթ աշխարհի հետ կապած է: Նա մեր ազգային եկեղեցին է:

Պատ. Մարգուկէսեանը դաւանաւորի նկատուել չէ, այլ նա պարզապէս տեսնելով որ իր մայրենի եկեղեցին իր ծառայութեան պէտք ունի, անոր գիրկը եկաւ ծառայելու: Կը յիշեմ որ տարիներ առաջ Ամերիկեան Միութեան Գործիքարար Մր. Պարթևը, այս եկեղեցւոյ տակի ժողովարարի մէջ ատենախօսելու ատեն ճշմարիտ ըսաւ թէ՛ Հայաստան զրկուած միութեանը ջանալու չեն Հայերը դաւանաւորները ընելու, այլ անոնց օգնելու են Սուրբ Գրիքը սովորելու և զարկ տալու են անոնց քաղաքակրթութեան ու մտաւոր զարգացման: Մենք երախտադրութեամբ կը նայինք այդպիսի միութեաններու: Սակայն կը ցաւինք տեսնելով մեր ազգը յարանուստութիւններու բաժնուած և շատ նկատուելով տկարութեան մատնուած:

Մեր ազգային գոյութիւնը պահպանելու, մեր երկիրը զարգացունելու, մեր ժողովուրդը բարձրացունելու շահերը կը պահանջեն որ մենք միութեան գործութիւնը ունենանք, և այդ միութիւնը կ'ըլլայ մեր Ազգ. Եկեղեցւոյն գիրկը:

Նիւ ԵՈՐԲԻ 2. Ե. Գրադարանի Միութեան ընթերցարանը բաց կ'ըլլայ ամեն Երեքշաբթի, Հինգշաբթի և Ծարաթ օրերը երեկոյն ժամ 8ին յետոյ և կիրակի կէսօրէն ետք ժամ 1ին մինչև 5:

ՔՐԿԱՔՐԿԱՑ

ՓՈՔՐ ԱՍՈՑ ԵՐԿԱՐԿՆԵՐԸ

Պերկինսն կը տեղեկագրուի թէ գերմանական գրամատերները որ թուրքերոյ Անատոլիա երկրամասին գրամագրութեամբ մատակարարուին, խուճաք մը երկրորդ խորհրդի զրկած են, որոնք դէպի Պատանա քրկարելիք երկրամասին ճամբան սրտի գծեն: Տրկու ուղղութիւն կը թեւադրուի Մին Սվադի ճամբով և դէպի Էրզրում ճիւղ մը երկարելով ու միւսը Գանձի և Էնկիւրի կողմէն:

Ռուսոյ գործնական կերպով կը հակառակի այս ուղղութեամբ շինուելիք երկրամասին, նկատելով թէ այդ պատերազմի ժամանակ իրեն համար խիստ աննպաստ պիտի ըլլայ հակառակ կողմէն զօրքերը գէպի ներկայ փոխադրելով:

Ակնյայտ է որ Գերմանիա ոգի իրան կաշխատի Արևմտեան Թիւրքիոյ մէջ իր ոտքը դնելու տեղ գտնելու: Սուլթանը այս բանին մէջ խիստ կաշկանդուած վիճակի մէջ է. մէկ կողմէն չուզեր կայսրը տեղեկացունել ու միւս կողմէն կը վստայ երկրին հակառակութենէն:

ԹԻՒՐԿԻԱ

Սեպտ. 21ին 6 երիտասարդ թիւրքեր ձերբակալուած են Պոլիս, որոնք պիտի գատուին Մարաշիստ Սաստիտիս փաշայի առջև: Սեպտ. 25ին կը հեռագրուի Լոնտոն Քայմազի թէ երիտասարդ թիւրքերէն բազում ձերբակալութիւններ կ'ըլլան, որոնք բժշկական քննութենէ անցնելով իր խելագարներ յիմարանց կը զրկուին: Պալատին մէջ այն հաւատքը կը տարէ թէ մտ օրերս երիտասարդ թիւրքերը կարեն շարժում մը պիտ ընեն Սուլթանին դէմ, որոյ նախաձեռնողն է Գեղպտական իշխան մը:

Որովհետև Սուլթանը կը ցաւի որ Օսմանեան բանակը կազմակերպող Գերման Կոյց զօրավարը յունական կառավարութեան տրամադրութեան տակ զերուած է Կայսր կողմէն, այժմ այդ լուրը կը հերքուի և յիշեալ զօրավարը զբաղած է Գունական ամրութիւնները քննելով:

— Գլխաւոր կամուրջին վրայ յայտնի կերպով սպանուած է նախարարապետի որդին:

ՌՈՒՍԻԱ

Մուրավլէֆ, Ռուսիոյ Արտաքին Գործոց նախարարը, Սպանիա այցելեց, Սպանիոյ հետ Անգլիոյ դէմ դաշնակցութիւն մը կազմելու: Անկէ փախիզ վերադարձաւ թէ Պրանսի արտաքին գործոց նախարարին փախադարձ այցելութիւնն տարու և թէ խորհրդակցելու թէ Անգլիոյ դէմ միասին ինչ գիւրք բռնելու են երբ Թրանսիլանի վրայ դատերազմը ծագի:

ԽՐԱԿՐԻՍՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մարտի 2, Արմէնիա — Ծնորհակալութեամբ քտացանք:

Փ. Պոլիս, Կորիւն. — Ստացանք:

Ռուսիա, Լիո. — Ծնորհակալութիւն զրկեցէք: 2եղ գրուեցաւ:

Ռուսիա, Գարապետեան — Գաղթեցուցինք ձեզ թերթի զրկել, դուք պարտք ունիք մեզ «Տիգրիս»-ի 59 թուէն:

Ռուսաշայատանէն ստացած ենք ազգաբանական շատ հետաքրքիր և յոյժ շահեկան յօդուածներ, որ կարգին պիտ հրատարակենք:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԻՆԵՐՈՒՆ

Որքուեցան նամակներ: Ծնորհակալութիւն անոնց որոնք պատասխանեցին և բաժնեգիրը խրկեցին: Իսկ անոնք որոնք դեռ չեն պատասխանած, կը խընդրենք որ ԱՆՅԱՊԱՂ պատասխանեն:

Ամերիկայի Հայ Հրատարակչական Ընկերութեան հետ յարաբերել ուղղունքը կամ անդամակցիլ ցանկացողները դիմելու են վարչութեան Աստիճակներ, հետեան Հասցէով:

Armenian Publishing Co.
1035 P. O. Box
Providence R. I.

Ա Ձ Դ

Արժ. ինք վարդապետ պիտի քարոզէ վաղը Ս. Ոսկերեան եկեղեցոյ մէջ նիւթ ունենալով «Կան մարդիկ, որոց մեղքերը իրենցմէ յառաջ կը հասնին դատաստան, և կան մարդիկ ալ որոց մեղքերը իրենցմէ ետքը կ'երթան»:

Ա. ԺՈՂՈՎ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՍԱ ԼՍԱՐԱՆԻ
Հայկական Ազատ Լուսարանի Ա. Ժողովը տեղի կունենայ յառաջիկայ Կիւրակէ (15 Հոկտ.) Elx Hall ժողովարանին մէջ ի թիւ 19 W. 27րդ փողոց Պրոտուէյի անկիւնը: Ժողովը կը բացուի ճիշդ ժամը 8ին և կը փակուի 10ին:

Ժողովը պիտի բանաւը նիւթ ունենալով «Լուսարանի Օղուաները»: Յետոյ պիտի խօսի Յարգելի Տօք. Գարբիշեան՝ նիւթ ունենալով «Ջարգացում»: Եւ յետոյ պիտի կատարուի Լուսարանական վարչութեան մը ընտրութիւնը:

Յը փափաքինք որ Նիւ Եօրքի Հայ Երիտասարդութեան մտաւոր և բարոյական զարգացման նախաձեռնողի ամեն Հայ փութայ ներկայ գտնուի ճիշդ որոշեալ ժամուն:

Թեմակալ Հովիւ
ԽԱՂՎԱՐԴԱՊԵՏ

ԿԸ ՓԵՏՈՒՆԻՆ

Դատէմցի Եսայի Կօչակարեան, որն մի քանի ամիսներէ ի վեր անհետացեր է: — Մարանկող Կարապետ Գարակէօզեան: — Սեբաստիոյ Դեմաճ գիւղացի Առաքել Սէրէմիտեանը:

Ասոնց հասցէները գրել խմբագրութեան:

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

331 E. 31րդ փողոցի նպարավաճառի խանութս կուզեմ ծախել չափաւոր գունով մը: Լաւ պատեհութիւն մ'է ազատ ու շահաւէտ գործ մ'ունենալ փափաքողներուն: Դիմել վերոյիշեալ հասցէին:

Պ Ա Տ Կ Ե Ի Ե Ր

(Մեր կեանքէն)

Գրեց

Վ. ՇԱՀԷՆԻ

Գին 15 սէնթ:

Կը պարունակէ չորս վէպիկներ Հայաստանի նորագոյն իրական կեանքէն առնուած:

Կը վաճառուի Նիւ Եօրքի մէջ «Ջայն Հայրենեացի» խմբագրատան և Հայկական Ընթերցարանի թանգարանապետ Պ. Դ. Պոյաճեանի մօտ:

Իրովանէն Տրք. Ա. Շահպաղեանի մօտ: 74 North Main St. Prov. R. I., Թրոյ Պ. Մ. Հայրապետեանի, Մանչէսթըր Պ. Մ. Արդիանի և Ֆրէզնօ Պ. Ա. Պարթևեանի մօտ:

Ուստի Պ. Գրիգոր Պոյաճեանի մօտ: Սակաւաթիւ օրինակներ մնացած են:

Ճ Ա Շ Ա Ր Ա Ն

Մ. Տ ա մ պ ու ռ ա ճ ն ա ն ի
16 Thoms St., Worcester, Mass.

Մեր բազմաթիւ յաճախողները ինքնին կը վկայեն թէ որքան գոհացողիչ պայմաններու մէջ կը գտնուի ճաշարանատեղը մաքուր, խոհարարը վարպետ, գործածուած նիւթերը պատուական, կերակուրը բազմապիսի, համեղ և զերբամբար են:

Շարժական ճաշաբաններն են՝ \$1.85 առնուածները միայն սուրճ, Հաց և կարագ առնողներուն համար, \$2.35 սենեակով: \$2.10 նախաճաշին հաստատուն կերակուր առնողներուն, \$2.60 սենեակով միասին:

Փորձեցէք և շատ գոհ պիտի մնաք: Յ—3 Մ. Տ ա մ պ ու ռ ա ճ ն ա ն ի

Ա Ձ Դ

496 1st Ave. ի շաքարեղէնի և սիկարի կոկիկ խանութս Հայրենիք երթալուս պատճառաւ կը ծախեմ. առանձին գործ ընել փափաքողներուն համար լաւ պատեհութիւն է. շտառով մեկնելու համար անմիջապէս պիտի վաճառեմ. տեղը կը գտնուի իրիկուան ժամը 3էն ետքը:

Լոյս տեսաւ

ԱՌ ՁԵՈՒՆ
ԱՄԵՐԻԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
Անգլիերէն և Հայերէն

Աշխատասիրեց
ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

Հրատարակութիւն Էլիաս Սալաֆ և Ընկ. Նիու Եօրք

Կը պարունակէ շուրջ 25,000 բառեր: Ընտիր Ամերիկեան արտասանութեամբ և խիստ դիւրահասկանալի բացատրութիւններով:

Գինն է \$2.50

Դիմել առ J. CHOOIJIAN,
College Point, N. Y.

Գրքերը Հոկտ. 20էն վերջ ծախու պիտի գտնուին Հետեւեալ անձերու քով:

Մամլաքաթեան Եղարք, Փաթրոն, Ն. Ճ. Յ. Պատմաճեան, Սթրիքիկ, Ն. Ճ. Ազաճեան Եղարք, Չըլի, Մասն. Խ. Կոստանդեան, Լիօքնո, Մասն. Յ. Բարակեան, Ուսթըր, Մասն. Թ. Թօփրահանեան, Ֆրէզնօ, Իսլ.

Ներկայիս կը խնդրեմ մեր բաժանորդներէն, որ հաճին իրենց Առ Ձեռն Ամերիկեան Բառարանի բաժանորդագրութեանց սաացարկերը ինձ վերադարձնել իրենց ներկայ հասցէովը միասին և ստանալ իրենց Բառարանը: Գրքերը պիտի զրկուին Հոկտ. 15էն վերջ:

Պ. Ռ. Թորոսեան
564 Clinton Ave.
West Hoboken, N. J.

Կը ծախուի նաև խմբագրութեան քով:

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

Պանութս որ կը գտնուի Պոսթոնի նշանաւոր փողոցներէն մէկուն մէջ, անձնական մասնաւոր խնդրոյ մը պատճառաւ կուզեմ ծախել: 4 տարիներէ ի վեր է որ միշտ շահաւոր առուուոր կ'ընեմ, խանութիս մէջ կը ծախեմ ամեն տեսակ շաքարեղէններ, պղպաղակ, սոսա, սիկար և սիկարէթ, ամեն տեսակ լրագիրներ, պտուղ ևն. ևն.:

Լաւ պատեհութիւն մ'ընէ 2 ընկերով այսպիսի ազատ գործ մ'ընել:

Դիմել Հետեւեալ հասցէին:
S. M. Danielian
1027 Tremont St., Boston Mass.

ՄԵՐՈՒՅ ՎԱՊԱՆՏԵԱՆ

231 իսթ 28րդ փողոց նպարավաճառի խանութս մէջ կը ծախուի ի միջի այլոց իւրաքանչիւր փառնան շամիչ 5սթ., սպար 5, մաքարոնի 5, դեղին թիւ 2էն 8, զէյթի 10, օթմիլ 2 սէնթի, սպասի 5 փառնանոցը 27 և 1 փառնանոցը 8 սէնթի և քէնով տոմարէսը 7 սէնթի, պատուական ապրանք կը պահեմ, աժան կը ծախեմ, մեծ քանակութիւնով գնողներուն կարեւոր զեղչ ընեմ:

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ

Մ, Տ ա մ պ ու ռ ա ճ ն ա ն ի

509 2րդ Ավիւր. 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արևելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և սաօրեայ թարմ միս:

Ուստի պատուական պըղուրը և ծեծածը փառնար 3 սէնթ, 25 փառնար կամ աւելի գնողներուն համար 2 1/2 սէնթի, Հայկական պանիրին փառնար 15, իսկ մեծաքանակ գնողին համար 18 1/2 սէնթի: Թիթիսայի ին փառնար 10 շատ գնողներուն համար 9 սէնթի, ձիթապատուղի պատուական իւղին կ'ընէ \$1.40 ի կը ծախենք:

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:

The Equitable Life Ins. Society of the U. S

«Էքուիթալ»

աշխարհի հզորագոյն և լաւագոյն կենաց ապահովագրական Ընկերութիւնը:


ամեն հասակի և վիճակի տէր անձանց համար ապահովագրեր կը տայ ի դէպս մահու կամ 15—20—25 տարիէն վճարելի գթէ ուղուի:

Օտար երկիրներէ կամ ներսի նահանգներէն փափաքող կրնան գիւրաւ թղթակցութեամբ ինքզինքնին ապահովագրել տալ:

Հրէքէն դէմ ևս կապահովագրեմ:

(Գործակալ)

ԿՐԱՊԵՏ ՊԻՐԻԻՆՃԻԿ
164 E. 27th St. New York



Դ Ե Ր Ձ Ա Կ

ՅԱՎՈՐ ՈՒՉՈՒՆԵԱՆ

159 իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աժան հանգրձ կը փնտռէք, անանկ չէ՞. — մենք սուղ կը շինենք — բայց չէ՞. մեր գործին որքան աժան ըլլալը ստան մը գործածուելէն ետքը միայն կրնաք հասկնալ. անոնք որ իրենց զրամը անորժէք ապրանքի սուած ըլլալու զղջումը չեն ուզեր ունենալ և նոյն ստան լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզի հանդիպելուն համար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ Հարիւրին քառասուն աժան պատրաստի հանդերձ ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարգուկենք:

Գիտնալու համար թէ, մենք մեր հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կառնենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ:

ՊԼՂՈՒՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Այս նոր ընկերութիւնը կ'արտադրէ շատ լաւ և աժան պղպուր և ծեծած:

Մեծաքանակ գնողաց համար գինն է 2 1/2 սէնթ փառնարը:

Մանրամասն տեղեկութիւն ուղողներն պէտք է դիմեն Հետեւեալ հասցէին:

NEW YORK

BULGOOR MANUFACTURING CO.
226 TO 232 Clinton St. Hoboken n. J.

Ա Ձ Դ

42րդ փողոցի Ս. Բարթոլոմէոս եկեղեցոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան Կաճառը տեղափոխուած և ունելի հոտատա հիմնու վրայ վերակազմուած ըլլալով իւր քարոզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 Յրդ Ավիւր 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8էն 10ը: